



Մ ՈՒՐՐ Զ ԱԿՈՐ

ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ԱՄՅՐ ԵՒ ԿԵՂԵՅԻ



ԵՐԿՐՈՐԴ ԾԱՊԿԱԶԱՐԴ

29 ՄԱՅԻՍ 2022

ԸՆԹԵՐՑՈՒՄ

«ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ»

ԳԻՐՔԵՆ

(23.12-35)

Յաջորդ առաւօտ կարգ մը հրեաներ իրարու քով եկան եւ իրենք զիրենք նզովքի տակ դնելով երդում ըրին չուտել ու չխմել՝ մինչեւ չսպաննեն Պօղոսը: Քառասուն հոգիէն աւելի էին այս երդումը ընողները: Ասոնք մօտեցան քահանայապետներուն եւ երէցներու եւ ըսին. «Մենք նզովքի տակ դնելով մենք մեզ երդում ըրինք բան չճաշակել, մինչեւ Պօղոսը չսպաննենք: Դուք ատեանին անունով հազարապետին լուր ղրկեցէք որ զայն ձեզի ղրկէ, պատճառաբանելով թէ կ'ուզէք իր մասին աւելի ստոյգ տեղեկութիւն ունենալ: Իսկ մենք պատրաստ կ'ըլլանք արդէն եւ տակաւին հոս չհասած՝ կը սպաննենք զինք»:

Պօղոսի քեռորդին այս դաւադրութիւնը իմանալով, եկաւ զօրանոց եւ Պօղոսին պատմեց: Պօղոս հարիւրապետներէն մէկը կանչելով ըսաւ. «Այս պատանին հազարապետին տար, որովհետեւ իրեն ըսելիք մը ունի»: Հազարապետը պատանիին ձեռքէն բռնելով մէկ կողմ տարաւ եւ հարցուց. «Ի՞նչ ունիս ըսելիք»: Պատանին ըսաւ. «Հրեաներ համաձայնեցան քեզմէ խնդրել որ վաղը Պօղոսը Ատեան ղրկես, որպէս թէ աւելի մանրակրկիտ հարցուփորձելու համար զայն: Բայց մտիկ մի՛ ըներ իրենց. որովհետեւ իրենց մէջէն քառասունէ աւելի մարդիկ իրենք զիրենք նզովքի տակ դնելով երդում ըրած են չուտել ու չխմել՝ մինչեւ չսպաննեն զայն. եւ հիմա դարան մտած ու պատրաստ՝ կը սպասեն քու հրամանիդ»:

Հազարապետը պատանին ճամբեց, պատուիրելով. «Ուե՛լ մէկու մի՛ ըսեր ինչ որ ինծի յայտնեցիր»: Ապա հարիւրապետներէն երկուքը կանչելով ըսաւ. «Երկու հարիւր

հետեւակ, եօթանասուն հեծեալ եւ երկու հարիւր տիգաւոր զինուորներ թող պատրաստ ըլլան գիշերուան ժամը իննին դէպի Կեսարիա ճամբայ ելլելու: Պօղոսին համար ալ գրաստ պատրաստեցէք եւ զայն ապահով կերպով Ֆելիքս կառավարիչին հասցուցէք»: Նամակ մըն ալ գրեց, հետեւեալ բովանդակութեամբ.

«Կլօդիոս Լիսիասի կողմէ՝ նորին գերագանցութիւն Ֆելիքս կառավարիչին: Ողջո՛յն:

«Հրեաներ բռներ էին այս մարդը եւ զինք սպաննելու վրայ էին: Իմանալով որ հոռմայեցի է, վրայ հասայ եւ զինք ազատեցի: Ուզեցի գիտնալ թէ ի՛նչ յանցանքով կ'ամբաստանեն զինք. ուստի իրենց Ատեանը տարի զինք, եւ հասկցայ թէ իրենց Օրէնքին վերաբերող խնդրի մը համար կ'ամբաստանեն. այսինքն մահուան կամ բանտարկութեան արժանի յանցանք մը չունի: Բայց երբ ինծի իմացուցին թէ հրեաներ դաւ մը լարած են իր կեանքին դէմ, զայն իսկոյն քեզի ղրկեցի, հրամայելով որ ամբաստանողները քեզի՛ ներկայացնեն իրենց ըսելիքները: Ո՛ղջ եղիր»:

Հազարապետին հրամանին համաձայն, հետեւակ զինուորները առին Պօղոսը եւ գիշերով Անտիպատրիս փոխադրեցին, եւ յաջորդ օրը զայն իրենց ընկերացող հեծեալներուն յանձնելով, իրենք զօրանոց վերադարձան: Հեծեալները Կեսարիա հասան եւ նամակը կառավարիչին տալով Պօղոսն ալ անոր ներկայացուցին: Կառավարիչը նամակը կարդաց եւ Պօղոսին հարցուց թէ կայսրութեան ո՞ր նահանգէն է. եւ հասկնալէ ետք թէ Կիլիկիայէն է, ըսաւ. «Երբ որ քեզ ամբաստանողները գան՝ կը լսեմ քեզ»:

Եւ հրամայեց որ զայն Հերովդէսի ապարանքին մէջ պահեն:

ԸՆԹԵՐՑՈՒՄ
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՌԱՔԵԱԼԻ
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ
(5.13-21)

Ասիկա գրեցի ձեզի, Աստուծոյ Որդիին
հաւատացողներուդ, որպէսզի գիտակցիք՝ թէ

...համարձակ
կերպով
կը դիմենք
Աստուծոյ,
այն
վստահու-
թեամբ,
որ երբ իր
կամքին
համաձայն
բան մը
խնդրենք՝ կը
լսէ մեզի:

յաւիտենական կեանք ունիք:
Ուստի համարձակ կերպով
կը դիմենք Աստուծոյ, այն
վստահութեամբ, որ երբ
իր կամքին համաձայն
բան մը խնդրենք՝ կը լսէ
մեզի: Եւ երբ գիտենք թէ
մեր խնդրանքները կը լսէ,
գիտենք նաեւ թէ պիտի
ստանանք ինչ որ կը
խնդրենք իրմէ:

Երբ տեսնես, թէ հա-
ւատացեալներէն մին գործեց մեզք մը, որ
մահացու չէ, աղօթէ Աստուծոյ՝ որ կեանք տայ
անոր: Ասիկա կ'ըսեմ միայն անոնց համար, որոնց
մեղքերը մահացու չեն, որովհետեւ մահացու
մեղքեր ալ կան, որոնց համար չեմ ըսեր՝ որ
աղօթէք: Ամէն անիրաւութիւն մեղք է, բայց
ամէն մեղք մահացու չէ:

Գիտենք, թէ ով որ Աստուծմէ ծնած է՝ չի
մեղանչեր, այլ Աստուծոյ ծնունդը՝ Քրիստոս,
կը պահպանէ գայն եւ չարը անոր չի մօտենար:

Թէպէտ ամբողջ աշխարհը
չարին ենթակայ ըլլայ, մենք
գիտենք՝ թէ Աստուծմէ ենք:
Եւ գիտենք, թէ Աստուծոյ
Որդին եկաւ ու բացաւ
մեր միտքերը, որպէսզի
ճանչնանք ճշմարիտ
Աստուածը: Մենք միացած
ենք ճշմարիտ Աստուծոյ

եւ անոր Որդւոյն Յիսուս Քրիստոսի: Ա՛ն
է ճշմարիտ Աստուածը եւ յաւիտենական
կեանքը:

Մենք
միացած ենք
նշմարիտ
Աստուծոյ
եւ անոր
Որդւոյն
Յիսուս
Քրիստոսի:

Որդեակներս, դուք ձեզ կուռքերէ հեռու
պահեցէք:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ
(12.12-23)

Յաջորդ օր ժողովուրդի մեծ բազմութիւն
մը, որ գատկի տօնին առիթով Երուսաղէմ
եկած էր, երբ լսեց թէ Յիսուս Երուսաղէմ կու
գայ, արմաւենիի ճիւղեր առաւ եւ Յիսուսը
դիմաւորելու ելաւ, բարձրաձայն աղաղակելով.

«Ովսանցա՛,

օրհնեա՛լ ըլլայ ան որ կու գայ Տիրոջ
անունով, Իսրայէլի թագաւորը»:

Յիսուս էջ մը գտնելով նստաւ անոր վրայ,
ինչպէս որ Սուրբ Գիրքերուն մէջ գրուած է.

«Մի՛ վախնար, ո՛վ Երուսաղէմ, Սիոնի՛
աղջիկ, որովհետեւ թագաւորդ քեզի կու
գայ իշու մը աւանակիւն վրայ նստած»:

Յիսուսի աշակերտները այս բոլորը չհասկցան
ատենին, բայց երբ Յիսուս փառաւորուեցաւ՝
այն ատեն յիշեցին թէ այս կատարուածները
Յիսուսի համար գրուած էին եւ իրենք այդ
գրուածն էր որ կատարեցին: Բոլորն ալ կը
վկայէին թէ Յիսուս Ղազարոսը կանչեց
գերեզմանէն եւ գայն մեռելներէն յարուցանեց:
Այս իսկ պատճառով Երուսաղէմ գտնուողները
բոլորն ալ զինք դիմաւորելու ելան, որովհետեւ
լսած էին թէ ի՛նչպէս ան յարութեան հրաշքը
գործած էր: Իսկ փարիսեցիները իրարու կ'ըսէին.
«Կը տեսնէ՞ք որ բան մըն ալ չէք կրնար ընել.
ահա ամբողջ աշխարհը իրեն կը հետեւի»:

Տօնին առիթով կարգ մը յոյներ ալ եկած էին
Երուսաղէմ՝ Աստուծոյ երկրպագելու: Անոնք
մօտեցան Փիլիպպոսի, որ Գալիլայի Բեթսայիզա
քաղաքէն էր, եւ աղաչելով ըսին. «Տէ՛ր, կ'ուզենք
Յիսուսը տեսնել»: Փիլիպպոս, եկաւ Անդրէասին
ըսաւ եւ երկուքը միասին Յիսուսի ներկայացուցին
անոնց խնդրանքը: Յիսուս պատասխանեց. «Ահա
մարդու Որդիին փառաւորուելու ժամը հասաւ»: